ԱՆԻ ՈՍԿԱՆՅԱՆ*

ԱԴԱՆԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՓՈՐՁԵՐԸ 1910-1914 ԹԹ.

Բանալի բառեր՝ *Կիլիկիա, Ադանայի նահանգ, Օսմանյան կայսրություն, Ադանայի Գավառական ժողով, Ադանայի Քաղաքական ժողով, Ադանայի Տնտեսական խորհուրդ, 1909 թ. կոտորած, ազգային սեփականություն, անհատական ու ազգապատկան գույք, տնտեսության ոչնչացում:*

1909 թ. Ադանայի ջարդը մարդկային մեծ կորուստներից բացի (շուրջ 30.000), լուրջ հարված հասցրեց նահանգի հայերի տնտեսությանը: Հաղթահարելով կոտորածի ծանր հետևանքները՝ հայերը փորձում էին վերականգնել իրենց խաթարված կյանքը, տնտեսական ու կրթական համակարգը: Կոտորածից հետո, ամիսների ընթացքում, Ադանայի հայ ազգային գործիչները բազմաթիվ խնդիրների լուծման հետ մեկտեղ փորձում էին կարգավորել նաև Ադանայի Հայոց առաջնորդարանի վարչական մարմինների գործունեությունը: Գավառական ժողովն[1] *իր առաջին նիստը գումարեց 1909 թ. դեկտեմբերի 27-ին. «Վեհ Կաթողիկոսին համար 2435/401 և դեկտ. 22 թուակիր յանձնարարութեան համաձայն ըստ Սահմանադրական օրէնքի...»*[2]*, որի ընթացքում ընտրվեց Քաղա-*

---

* ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, ani.h.voskanyan@ysu.am, հոդվածը ներկայացնելու օրը՝ մարտի 30, 2022, գրախոսելու օրը՝ ապրիլի 29, 2022:

1 Ազգային սահմանադրության մեջ կարդում ենք. «Յօդ. 94. Առաջնորդը Գաւառական Ժողովոյ նախագահն է, և անոնց գործադիր իշխանութիւնը կը վարէ: Իր պարտաւորութիւն է գաւառին մէջ Ազգային Սահմանադրութեան գործադրութեանը հսկել: Յօդ. 96. Կոստանդնուպօլսոյ մէջ եղածին նման՝ Գաւառներուն մէջ ալ ամեն թաղ պիտի ունենայ Թաղական Խորհուրդ մը, Թաղական Սնտուկ մը, և Թաղական Դիւանատուն մը: Նմանապէս Առաջնորդանիստ Քաղաքին մէջ պիտի հաստատուին Կրօնական և Քաղաքական ժողովներ: Եւ Քաղաքական ժողովին տնօրէնութեանը տակ՝ Գաւառական Սնտուկ մը: Նաև Առաջնորդարանի մէջ Գաւառական Դիւանատուն մը հաստատուելով, Առաջնորդական վիճակին բոլոր ժողովրդոց Թաղական Ազգահամարի տումարները հոն պիտի ժողվըվին և Գաւառական ընդհանուր Ազգահամար պիտի կազմուի» (*Ազգային Սահմանադրութիւն Հայոց, Նիզամնամէի Միլլէթի էրմէնիան*, Կ. Պոլիս, 1863, էջ 52-53):

2 Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), Ադանայի Հայոց առաջնորդարանի արխիվ (անմշակ), «Ատենագրութիւն Գաւառական Ժողովոյ Ատանայի» (սկիզբ՝ 27 դեկտ. 1909, վերջ՝ 25/10 մարտ 1914), 27 դեկտեմբերի, 1909, թ. 1:

քական ժողովի[3] *նոր կազմը*[4]*, Տնտեսական խորհուրդն*[5] *իր գործունեությունը վերսկսեց 1910 թ. փետրվարին*[6]*:*

1909 թ. դեկտեմբերի 29-ին թիվ 2435/415 հրամանով Կիլիկիո Հայոց կաթողիկոս Սահակ Բ. Խապայանը (1902-1939) հաստատեց Քաղաքական ժողովի նորընտիր կազմը (Ստեփան Պզտիկյան, Տիգրան Աշըգյան, Մանուկ Շահպազյան, Կիրակոս Քէշիշյան, Միհրան Պետրոսյան, Սամուել Ավետիսյան և Ավետիս Գյուլպենկյան)[7]*: 1910 թ. փետրվարի 8-ին Քաղաքական ժողովի կողմից ընտրվեց Տնտեսական խորհուրդը (Հարություն Ներսեսյան, Հարություն Գույումճյան, Ավետիս Աղազարյան, Ավետիս Գալուստյան, Գրիգոր Պետրոսյան, Մկրտիչ Գույումճյան և Գրիգոր Երեցյան)*[8] *որն իր առաջին նիստը գումարեց 1910 թ. փետրվարի 10-ին (Տնտեսական խորհրդի ատենագրության մատյանում Ա. նիստին Գրիգոր Պետրոսյանի փոխարեն Միհրան Քեշիշյան է արձանագրված), ընտրվեց Հարություն Ներսեսյանը՝ ատենապետ, Հարություն Գույումճյանը՝ ատենադպիր, իսկ Ավետիս Գալուստյանը՝ գանձապետ*[9]*:*

Ադանայի հայերի ջարդի ընթացքում հրկիզված ազգապատկան խանութ-

---

[3] «Յօդ. 41. Քաղաքական Ժողովոյ պաշտօնն է Ազգային քաղաքական գործոց ընդհանուր տեսչութիւնը: Իւր պարտաւորութիւնքն են Ազգին բարեկարգութեան և յառաջադիմութեան մտադրութիւն և փոյթ ունենալ, իր տեսչութեան տակ գտնուող Խորհրդոց կողմէն մատուցուած ազգօգուտ առաջարկութիւնները ուշադրութեամբ քննել, և անոնց կարևորութիւնը յայտնուելէն ետքը՝ հաստատել կամ գործադրութեան արգելքները բառնալու ջանք ընել» (*Ազգային Սահմանադրութիւն Հայոց, Նիզամնամէի Միլլէթի էրմէնիան*, էջ 28):

[4] ՄՄ, Ադանայի Հայոց առաջնորդարանի արխիվ, «Ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ Ատանայի», (սկիզբ՝ 2 մարտ 1905, վերջ՝ 10 ապրիլ 1915), Ա. նիստ, 1 հունվարի, 1910, թ. 49:

[5] «Յօդ. 46. Տնտեսական խորհուրդը կը բաղկանայ եօթն տնտեսագէտ աշխարհականներէ, զորս Քաղաքական ժողովը կ՚ընտրէ քուէից առաւելութեամբ: Տնտեսական խորհրդոյն պաշտօնն է՝ Կ. Պոլսոյ մէջ գտնուած Ազգային բոլոր Հաստատութեանց և անոնց կալուածներուն մատակարարութեան ընդհանուր տեսչութիւնը: Իւր պարտաւորութիւնն է՝ նոյն հաստատութեանց բարեկարգութեանը անխոնջ հըսկել և հոգ տանիլ: Տնտեսական խորհուրդը պէտք է հոգ տանի որ ամեն Ազգային կալուած օրինաւոր կալուածագիր ունենայ: Թէ՛ Կ. Պոլսոյ և թէ՛ գաւառներու մէջ գտնուած Ազգային անշարժ ստացուածոց կալուածագրերուն օրինակները՝ Տնտեսական Խորհրդոյ ձեռքոք ժողվուելով՝ Պատրիարքարանի դիւանատան մէջ պիտի պահուին: Ազգային ո՛ր և է կալուածոյ գնումն ու վաճառումը չ՚կրնար տեղի ունենալ, առանց Տնտեսական խորհրդոյ գիտութեան, Քաղաքական ժողովոյ հաճութեան և Պատրիարքի կընքով հաստատութեան» (*Ազգային Սահմանադրութիւն Հայոց, Նիզամնամէի Միլլէթի էրմէնիան, էջ 30-31*):

[6] ՄՄ, Ադանայի Հայոց առաջնորդարանի արխիվ, «Ատենագրութիւն Տնտեսական Խորհրդոյ Ատանայի» (սկիզբ՝ 5 մարտ 1905, վերջ՝ 21 մայիս 1914), Ա. Նիստ, 10 փետրվարի, 1910, թ. 44:

[7] ՄՄ, «Ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ Ատանայի», Ա. նիստ, 1 հունվարի, 1910, թ. 49:

[8] Նույն տեղում, Զ. նիստ, 8 փետրվարի, 1910, թ. 51:

[9] ՄՄ, «Ատենագրութիւն Տնտեսական Խորհրդոյ Ատանայի», Ա. նիստ, 10 փետրվարի, 1910, թ. 44:

ները վերակառուցելու համար 1910 թ. հունվարի 15-ի Քաղաքական ժողովի որոշման համաձայն, ընտրվեց «Շինութեան յանձնախումբ» հետևյալ կազմով՝ Ավետիս Գյուլպենկյան, Գրիգոր Ճերիտյան, Հարություն Ուրֆալյան, Հարություն Պզտիկյան, Մկրտիչ Եղիայան և Մանուկ Շահպազյան: Թաղական խորհրդի կազմավորված չլինելու պատճառով հայերի խանութների վարձակալության հետ կապված հարցերը նույնպես հանձնվեցին «Շինութեան յանձնախմբին»[10]:

1909 թ. ջարդի կազմակերպիչներին հաջողվել էր մեծապես կրճատել հայերի ֆինանսական հնարավորությունները, ինչն էլ, բնականաբար, բոլոր բնագավառներում հանգեցրել էր տարբեր սահմանափակումների: Ազգային բյուջեի բարելավմանն ուղղված ջանքերից մեկը Թերևս, ֆրանսիական «Orosdi-Back» ընկերության հետ պայմանագրի կնքումն էր, ինչի մասին առաջին անգամ հիշատակվում է Քաղաքական ժողովի 1910 թ. փետրվարի 23-ի նիստում. «...որոշեց Ս. Ստեփաննոս եկեղեցւոյ[11] արեւելեան կողմի ազգին գետինին վրայ Արևելքէն 30-25 երկայնքով և լայնքով Օրոզտի Պաքի տրուելու համար վաճառատուն պիտի շինուի...»[12]: Քաղաքական ժողովի և Թաղական խորհրդի[13] կողմից նույն ընկերության Ադանայի մասնաճյուղի տնօրեն Վալանտին Էնքսերճյանը նշանակվեց լիազոր փոխանորդ[14]: 1910 թ. ապրիլի 20-ին Սահակ Բ. կաթողիկոսի նախագահությամբ Ադանայի Քաղաքական ժողովը և Թաղական խորհուրդը խառը նիստ գումարելով, որոշեցին հիշյալ ընկերությանը 25 տարի ժամկետով վարձակալության հանձնել հրկիզված Ս. Ստեփանոս եկեղեցու տարածքը[15]:

---

[10] ՄՄ, «Ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ Ատանայի», Բ. նիստ, 15 հունվարի, 1910, թ. 50:

[11] Ադանայի Ս. Ստեփանոս եկեղեցին կառուցվել է հիջրեթի 1252 թ. (1836) (**Ա. Խ. Սաֆրաստյան,** «Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանի կողմից Թուրքիայի արդարադատության և դավանանքների մինիստրության ներկայացված հայկական եկեղեցիների և վանքերի ցուցակներն ու թարգմանները», *էջմիածին*, ՌՆԺՁ/1966, Ը., էջ 61):

[12] ՄՄ, «Ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ Ատանայի», Թ. նիստ, 23 փետրվարի, 1910, թ. 52:

[13] «Յօդ. 52. Թաղական Խորհուրդները կը բաղկանան ըստ տեղւոյն՝ հինգէն մինչև տասներկու անդամներէ: Թաղական Խորհուրդին պաշտօնն է՝ թաղին ժողովրդեան ազգային գործոց մատակարարութիւնը. եկեղեցւոյ և Դպրատան Հոգաբարձութիւնը. աղքատաց խնամակալութիւնը, և ազգայնոց մէջ պատահած վէճերուն հրնութիւնն ու խաղաղարարութիւնը: Իր պարտաւորութիւնքն են՝ թաղին եկեղեցւոյ պայծառութեանը խրնամ տանել. թաղին մէջ թէ՛ աղջիկ և թէ՛ մանչ տղայոց դաստիարակութեան համար՝ դպրատուններ հաստատելու ջանք ընել. և թաղին կարօտեալ ընտանեաց ձեռնտուութիւն ընել: Յօդ. 55. Իւրաքանչիւր Թաղական Խորհուրդ իր թաղին ժողովրդեան կողմէն կ՚ընտրուի» *(Ազգային Սահմանադրութիւն Հայոց, Նիզամնամէի Միլլէթի էրմէնիան, էջ 37-38)*:

[14] ՄՄ, «Ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ Ատանայի», ԺԴ. նիստ, 1 ապրիլի, 1910, թ. 56:

[15] Համառոտ վերաշարադրենք կնքվելիք պայմանագրի դրույթները. Վարձակալության տրվող տարածքը, խառը նիստի կողմից ստորագրված և կնքված հատակագծի համեմատ, պետք է կազմի 647 քառ. մետր: «Orosdi-Back» ընկերությունը պետք է կառուցի առնվազն 6.000 օսմ.

Ադանայի Հայոց առաջնորդարանի Քաղաքական ժողովի ատենագրությունների մատյանում պահպանված է «Orosdi-Back» ընկերության գլխավոր տնօրեն Լեոն Օրոսդիի հետ կնքված պայմանագրի պատճենը (ֆրանսերեն և օսմաներեն), որը հաստատված և վավերացված է Կիլիկիո կաթողիկոսի կնիքով. «Ատանայի Քաղաք. ժողովոյ և Թաղական խորհրդոյ անդամոց ստորագրութիւնները կը վաւերացնեմք. 1910 Յունիս 25. (Կնիք) Սահակ Բ. Կաթողկս. Կիլիկիոյ: Բնագրին յար և նմանն է»[16]: Պայմանագրում հստակ նշված է վարձակալության տրվող տարածքի վայրը, զբաղեցրած հողակտորի չափը, ինչպես նաև այն հայ համայնքին պատկանելու փաստը[17]: Այս իրադարձության կարևորությունն և պայմանագրի դրույթները լուսաբանվել են նաև Կ. Պոլսի հայ մամուլում[18]:

Ադանայի նահանգի հայերի ֆինանսատնտեսական ոլորտի բարելավմանն ուղղված քայլերը և ձեռնարկումները բազմաթիվ էին: Ծրագրվում էր Աբգարյան վարժարանի «ծանօթ գետնին» վրայի նոր փողոցում, «Աբօսթոլ օղլու» խանին կից, կառուցել երկհարկանի շենք և որպես բորսա ու գրասենյակ տալ վարձակալության «Առևտրական սենեկին»՝ հինգ տարի ժամկետով՝ յուրաքանչյուր տարվա համար 130 օսմ. լիրա վարձավճարով[19], նախատեսվում էր նաև հյուրանոցի կառուցում, որը վարձակալության էր տրվելու տարեկան 175 օսմ. ոսկով, չորս տարվա համար՝ 700 օսմ. ոսկի[20]:

1910 թ. օգոստոսի 18-ին Քաղաքական ժողովի և Տնտեսական ու Թաղական խորհուրդների մասնակցությամբ խառը նիստում տեղեկացվեց, որ հուլիսի 30-ի նիստի որոշման համաձայն, «Շինութեանց յանձնաժողովը» Ս. Ստեփանոս եկեղեցու շուրջ գնել է մի քանի կալվածք և մտադիր է գնել ևս մի քանիսը: Նշվում էր, որ պետք է ստուգել կալվածքները գրանցելու ձևը. «որպէսզի կարելի

ոսկի արժողությամբ շենք: 1911 թ. մարտ 1-ից մինչև 1936 թ. մարտ 1-ը՝ 25 տարի, շենքը պետք է լինի «Orosdi-Back» ընկերության տրամադրության տակ՝ տարեկան 100 օսմ. ոսկի վարձավճարով: 1936 թ. մարտ 1-ին ընկերությունը շենքը նույնությամբ պետք է վերադարձնի և իր ծախսած 6.000 ոսկին 25 տարվա ընթացքում իր վճարած 100 ոսկուց բացի, տարեկան առանց տոկոսի 240 ոսկի ևս վարձ հաշվարկելով՝ այլևս որևէ իրավունք և պահանջ չպետք է ունենա: Վարձակալության ժամկետը երկարաձգվում է ևս 10 տարով՝ արդեն տարեկան 600 օսմ. ոսկի վարձավճարով, եթե «Orosdi-Back» ընկերությունը ցանկանում է այն կրկին վարձակալել և այդ մասին տեղեկացնում է ժամկետի ավարտից մեկ տարի շուտ՝ 1935 թ. մարտի 1-ին: Շենքի ապահովագրությունը, կալվածական տուրքերը և վերանորոգումը պետք է վճարվեն «Orosdi-Back» ընկերության կողմից (ՄՄ, «Ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ Ատանայի», ԺԶ. նիստ, 20 ապրիլի, 1910, թ. 56-57):

16 Նույն տեղում, ԺԷ. նիստ, 23 հունիսի, 1910, թ. 59:

17 Նույն տեղում, թ. 57-59:

18 **Միապետ**, «Ատանայի այժմեան կացութիւնը», *Ժամանակ*, Կ. Պոլիս, 1911, թիւ 738, մարտ 9-22, էջ 1:

19 ՄՄ, «Ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ Ատանայի», ԼԱ. նիստ, 15 դեկտեմբերի, 1910, թ. 68:

20 Նույն տեղում, ԼԸ. նիստ, 6 ապրիլի, 1911, թ. 72:

ըլլայ ապագային ապահովել Ազգին սեփականութեան իրաւունքը»[21], քանի որ կայսրությունում գործող օրենքը պահանջում էր, որ սեփականատերերն իրական անձինք լինեն: Բացի այդ, ազգային կալվածքների սեփականության մասին Ազգային պատրիարքարանի 1910 թ. հունիսի 5-ի թիվ 324 շրջաբերականով հանձնարարում էր կալվածքները գրանցել վստահելի անձանց անուններով: Որոշվում է գնված և գնվելիք կալվածքները ձևակերպել Քաղաքական ժողովի անդամ Մանուկ Շահպազյանի անունով[22]: «Քիւլահճիլար» շուկայում երեք խանութների հրկիզված տարածքը 50 ոսկի հավելավճարով փոխանակվում է երկու փոի և երեք խանութի հետ, որոնք նույնպես գրանցվում են Մ. Շահպազյանի անունով[23]:

Բացի վարձակալության պայմանագրերից, Ադանայում հայերի ընկերային-տնտեսական վիճակի բարելավմանը նպաստում էին նաև նոր տնտեսական կապերն ու ներդրումները: Կարևոր իրադրաձություն էր 1910 թ. հոկտեմբերի 15-ին հայ ձեռնարկատեր Մ. Գյումուշյանի շոգենավի ժամանումը Մերսինի նավահանգիստ, որն առաջին անգամ ներկրում էր 1100 կտոր տարբեր տեսակի ապրանքներ և արտահանում՝ 1900-ից ավելի ապրանք և անասուն: Մերսինում «Մ. Կիմիւշեան» ընկերության ներկայացուցիչն էր «Մ. Գ. Ս. Զէլվէեանց պատուաւոր տունը»[24]:

Ադանայի հայերի կոտորածից հետո քաղաքապետարանը մշակում և գործողության մեջ է դնում քաղաքի նոր հատակագիծը, ինչից ելնելով, հրկիզված Ազգային վարժարանին կից խանութների տերերից Հապիպ էֆենդին վարժարանի հողակտորից ինը կանգուն հող գնելով՝ սկսում է խանութ կառուցել: Այս ոտնձգությունը թույլ չտալու և իրավիճակը կարգավորելու նպատակով նիստ է գումարվում, որի ընթացքում որոշվում է 165 օսմ. ոսկով գնված այդ խանութը հետ գնել[25]:

1911 թ. Գավառական ժողովի հանձնարարությամբ և Քաղաքական ժողովի հրավերով գումարված համատեղ ժողովը (Քաղաքական ժողով, Տնտեսական ու Թաղական խորհուրդներ) որոշեց Ազգային շենքերի համար հրշեջ կայան ստեղծել. «Արտօնել Քաղ. Ժողովոյ հսկողութեան տակ՝ Շինութեանց Յանձնաժողովը, որպէսզի անմիջապէս շինել տայ, վարժարանի շրջափակին մէջ ի նորոյ կառուցուող թեւին կից, տէփօ մը՝ յարմար դատուելիք չափով և ձևով, և գնէ հարկ եղած գործիներն ու պիտոյքը»[26]:

---

[21] Նույն տեղում, ԻԱ. նիստ, 18 օգոստոսի, 1910, թ. 61:
[22] Նույն տեղում, թ. 62:
[23] Նույն տեղում, ԻԲ. նիստ, 1 հոկտեմբերի, 1910, թ. 62-63:
[24] **Ճամբորդ,** «Կիլիկեան Բոնիկ», *Ժամանակ*, Կ. Պոլիս, 1910, թիւ 625, 26 հոկտ.-8 նոյմ., էջ 1:
[25] ՄՄ, «Ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ Ատանայի», ԻԲ. նիստ, 26 հոկտեմբերի, 1910, թ. 65:
[26] Նույն տեղում, ԽԴ. նիստ, 17 օգոստոսի, 1911, թ. 77:

1911 թ. հունվարին Ազգային ժողովի որոշման և Մայր Դիվանի հրավերի համաձայն, նախորդ Վարչությունը Ղալաթիայի խորհրդարանում նիստ գումարեց, որի ընթացքում որոշվեց առաջիկա նիստին հրավիրել Օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորներին՝ Ադանայի վիճակի ապահովության, կառավարության կողմից այրիների և որբերի համար նախատեսված 10.000 ոսկին առաջիկա տարվա բյուջեի մեջ ներառելու, ինչպես նաև հողային գրավումների և ընդհանուր հարստահարությունների մասին խորհրդակցելու համար: Ժողովը կազմում է նաև «ազգապատկան կալուածոց գրաման» և այլ հանձնաժողովներ[27]:

Ադանայի հայերի ջարդի հետևանքները նվազեցնելու համար կառավարությունը «հանդիսաւոր խոստում» էր տվել երեք տարի անընդմեջ 20.000 օսմ. ոսկի նպաստ (նախապես գումարի չափը նշվում էր 23.000 օսմ. ոսկի[28]) տալ Կիլիկիային, սակայն հետագայում, հատկացվելիք գումարի չափը երկու անգամ կրճատվում է: Հայերի համար նախատեսված պետական 10.000 օսմ. ոսկի նպաստը. «ո՛չ միայն այս տարուան պիւտճէին մէջ չէ անցուած, այլ և մտադրութիւն չկայ անցընելու»[29]: Կ. Պոլսի Հայոց պատրիարքը դիմում է ֆինանսների, դատական և ներքին գործերի նախարարություններին՝ պահանջելով, որ գումարը ներառվի բյուջեի մեջ՝ միաժամանակ Կիլիկիայից եկած նամակների հիման վրա տեղեկություններ է հաղորդում Կիլիկիայում հայերի տնտեսական ծանր վիճակի, ինչպես նաև աշխատանոցների և որբանոցների անկայուն դրության մասին: Նախարարները խոստանում են հարցը ներկայացնել նախարարների խորհրդին՝ հույս հայտնելով, որ գոհացուցիչ լուծում կլինի[30]: 1912 թ. կայսրության պետական բյուջեում Ադանայի այրիներին և որբերին հատկացված 10.000 օսմ. ոսկու չներառվելու և Կ. Պոլսի Հայոց պատրիրաքի դիմումների մասին գրում է նաև «Ժամանակ» թերթը. «դիմումները ապարդի՞ւն մնացին, թէ ոչ կառավարութիւնը բացառիկ կարգադրութիւն մը ընելով պիտի դարմանէ այս ցաւալի մոռացումը»[31]:

Թեև կառավարությունը հնարավորինս կրճատել էր ջարդը վերապրածների նպաստը, և վճարումն իրականացնում էր արհեստական դժվարություններ

---

27 «Նախորդ Վարչութեան Երէկուան Նիստը, Ազգ. Ժողովին Մէկ Հինգերորդ Խնդիրը», *Ժամանակ,* Կ. Պոլիս, 1911, թիւ 701, յունուար 25-7 փետր., էջ 3:

28 «Ատանայի 10,000 ոսկին», *Ժամանակ,* Կ. Պոլիս, 1910, թիւ 537, 15-28 յուլիս, էջ 3:

29 «Կիլիկիոյ տնտեսական վիճակը», *Ազատամարտ,* Կ. Պոլիս, 1912, թիւ 832, 26 փետրուար, 10 մարտ, էջ 3:

30 Նույն տեղում:

31 «Ատանայի տասը հազար ոսկին», *Ժամանակ,* Կ. Պոլիս, 1912, թիւ 1052, մարտ 8-21, էջ 2:

ստեղծելով կամ ընդհանրապես չվճարելով, սակայն չէր հապաղել 100.000 օսմ. ոսկի վարկ տրամադրել «կիլիկեան աղէտեալ վաճառականաց և երկրագործներուն», որոնք «քեֆալէթը միլթէսէլսէլէի»[32] *կամ հողային կալվածական «թէրհինի*[33]*» ձևով, պարտավոր էին հետզհետե վճարումներ կատարել: Արդեն իսկ նյութական ծանր վիճակում գտնվող տնտեսվարողները դժվարությամբ էին վճարում կամ չէին կարողանում վճարել փոխառնված գումարը և դրա տոկոսները: Արդյունքում, գրավադրված արտերն ու կալվածքները պետք է վաճառվեին երկրագործական բանկի կողմից կամ վաճառականները պետք է սնանկանային: Փոխառու պարտապանները առաջնորդարանի օժանդակությամբ դիմել են Ադանայի նահանգապետին և խնդրել, որ կառավարությունը նկատի ունենա այս հանգամանքները և. «Կայս. շնորհ բերել փոխառութեան այս գումարը իբր պարգև շնորհուելու համար»*[34]*: Նշվում է նաև, որ նահանգապետը անհրաժեշտ ամենը տեղեկագրել է Ներքին գործերի նախարարին՝ ներկայացնելով նաև վաճառականների վիճակը*[35]*: 1911 թ. հուլիսի 12-ին Ադանայի առաջնորդարանից Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանին ուղղված գրությունից պարզ է դառնում, որ առաջնորդի բոլոր կանխատեսումներն ու մտահոգությունները իրականացել են, քանի որ փոխառուներն անկարող են վճարել պարտքերը, և բանկը պատրաստվում է վաճառել վերջիններիս կալվածքները, որը. «պիտի զրկէ նահանգիս հայութիւնը իր արտերէն ու կալուածներէն, հեռանկար մը, որը արդէն թաքուն նպատակ մըն է, որ զանազան ձեւերու տակ կը գործադրուի ի վնաս Հայութեան»*[36]*:*

Միջոցների բացակայության պատճառով վտանգված էին նաև Կիլիկիո որբախնամ կենտրոնական հանձնաժողովի աշխատանքները: Պետական նպաստից Որբախնամին երկու տարվա ընթացքում տրամադրվել է 9624.32 օսմ. ոսկի, սակայն հանձնաժողովի ծախսը 1909 թ. օգոստոսից մինչև 1911 թ. նոյեմբերի վերջն արդեն կազմել էր 17281.97 օսմ. ոսկի: Աշխատանքների ընթացքում պարզ էր դարձել, որ պետական նպաստը բավարար չէ 1000-ից ավելի որբեր խնամելու համար և, որ անհրաժեշտ էր տարեկան 7.000 օսմ. ոսկի[37]*:*

Սոցիալական ծանր պայմանների հետ մեկտեղ, մշտական բնույթ էին կրում

---

32 Kefaleti müteselsile (թրք.) – խմբային համապարտ պատասխանատվություն:

33 Terhin (թրք.) – գրավադրված:

34 «Ատանայի վաճառականներուն վիճակը», *Ժամանակ,* Կ. Պոլիս, 1911, թիւ 701, յունուար 26-7 փետր., էջ 3:

35 Նույն տեղում:

36 *Ժամանակ,* Կ. Պոլիս, 1911, թիւ 851, հուլիս 20-2 օգոստոս, էջ 3:

37 «Կիլիկիոյ Որբ. Կեդր. Յանձնաժողովոյ Նոր Կոչը», *Ազատամարտ,* Կ. Պոլիս, 1912, թիւ 842, 9/22 մարտ, էջ 4:

հայերի նկատմամբ բռնությունները և նրանց կալվածքների վրա հարձակումները: Ժամանակի թերթերի տարբեր համարներում հրատարակված են հայերի սպանությունները և կողոպուտը փաստող հոդվածներ, ինչպես նաև Կ. Պոլսի Հայոց պատրիարքարան ուղարկված տեղեկագրեր[38]*:*

Առաջին աշխարհամարտից առաջ Ադանայի հայ բնակչությունը նահանգի տարբեր գավառներում և քաղաքներում դեռևս չէր հաղթահարել 1909 թ. կոտորածների աղետալի հետևանքները[39]*: Ադանայի վարչական մարմինները դեռևս քննարկում էին ջարդի հետևանքով ավերված ու չվերականգնված հայապատկան կառույցների խնդիրները՝ պարբերաբար դիմումներ հղելով օսմանյան իշխանություններին:*

Հրկիզված չորս եկեղեցիների և յոթ վարժարանների վերակառուցման համար 1913 թ. բյուջեից վճարելի 895.320 ղուրուշը ստանալու համար Ադանայի Հայոց առաջնորդ Շահե վարդապետ Գասպարյանի առաջարկով Քաղաքական ժողովը որոշում է խնդրել նահանգապետարանին՝ որպեսզի միջնորդի[40]*: Շահե վարդապետը, Քաղաքական ժողովի ատենապետ Լ. Խուպեսերյանը, ատենադպիր Թերզյանը պարբերաբար ահազանգում էին հրկիզված 11 եկեղեցիների և 15 դպրոցների վերակառուցման համար տրվելիք գումարների մասին՝ նշելով, որ արված դիմումները մնացել են անարդյունք*[41]*: 1914 թ. այրված եկեղեցիների և դպրոցների փոխարժեքի մի մասի վճարման համար դեռևս շարունակվում էին դիմումները*[42]*:*

1915 թ. հունվարի 10-ին Ադանայի Հայոց առաջնորդ Գևորգ ծ. վրդ. Արսլանյանը Կ. Պոլսի Հայոց պատրիարք Զավեն արք. Տեր-Եղիայանին է ներկայացնում 1909 թ. ջարդի ժամանակ հրկիզված և դեռևս չվերականգնված եկեղեցիների ու վարժարանների ցուցակը. «Ա. Հրդեհուած ու ցարդ չը վերաշինուած եկեղեցիներն են 4 հատ. Ատանայի Ս. Ստե[փ]աննոս եկեղեցին, Տէօրթ-Եօլի Էօզէրլի գիւղի Ս. Լուսաւորիչ եկեղեցին, Տէօրթ-Եօլի Նաճառլու գիւղի եկեղեցին, եւ Հաճընի Ռումլու գիւղի եկեղեցին, իսկ վարժարաններն են 7 հատ. Ատանայի աղջկաց վարժարանը, Ատանայի միւս վարժարանը, Տարսոնի վարժարանը, Տէօրթ-Եօլի Օճագլու գիւղի վարժարանը, Տէօրթ-Եօլի Նաճառլու գիւղի վարժա-

---

38 «Այր մը եւ կին մը սպաննուած, թալան, յարձակում որբանոցի վրայ», *Ազատամարտ,* Կ. Պոլիս, 1912, թիւ 995, 8/21 սեպտեմբեր, էջ 1: «Կիլիկեան կսկիծներ, Ոճիրները կը շարունակուին», *Ազատամարտ,* Կ. Պոլիս, 1912, թիւ 860, 1/14 ապրիլ, էջ 3:

39 «Հաճընի տխուր վիճակը», *Ազատամարտ,* Կ. Պոլիս, 1914, թիւ 1468, 20 մարտ, 2 ապրիլ, էջ 1:

40 ՄՄ, «Ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ Ատանայի», Բ. նիստ, 24 մայիսի, 1913, թ.106:

41 «Ատանայի դպրոցներն ու եկեղեցիները», *Ազատամարտ,* Կ. Պոլիս, թիւ 867, 1912, 10/23 ապրիլ, էջ 3:

42 *Կոչնակ,* Նիւ Եորք, 1914, թիւ 32, օգոստոսի 8, էջ 764:

րանը, Տարսոնի Գօզ-Օլուգ գիւղի վարժարանը, եւ Հաճընի Ռումլու գիւղի վարժարանը»[43]*: Առաջնորդը նշում էր, որ վերակառուցման համար պետական թահսիսաթը*[44] *ենթադրում է 895.320 ղրշ.*[45]*:*

1914 թ. դեկտեմբերի 10-ին Ադանայի Հայոց թեմի առաջնորդ Գևորգ ծ. վրդ. Արսլանյանը շրջաբերական է հղում իր թեմի վիճակներին՝ եկեղեցիների մասին տվյալներ տրամադրելու պահանջով: Ճշգրտված տվյալները ուղարկվելու էին Կ. Պոլսի Հայոց պատրիարքարան, որպեսզի վերջինս դրանք ներկայացներ օսմանյան կառավարությանը.

«10 դեկտ. 4
632/450
Շրջաբերական

Կը յանձնարարենք շուտափոյթ կերպով և անպատճառ պատասխանել հետևեալ հարցումներուն.

Ա. Տեղիդ եկեղեցին ո՞ր թուականին շինուած է (Արապին կամ ռումին)

Բ. Գետինը վա՞գֆ է, թէ մուգաթաալը կամ արազիի էմիրիյէ. այս պարագան պէտք է խնամով ճշտել.

Գ. Տարածութիւնը քանի՞ կանգուն է (միմարի արշուն). Քանի՞ ոսկի կ՚արժէ. քարուկի՞ր է [թէ] փայտաշէ՞ն.

Դ. Ֆէրման ունի՞, թէ ո՛չ: Եթէ ունի պատճէնը հանելով ղրկեցէք մեզ անպատճառ:

Ըստ որում Բ. Դուրը՝ պետական խորհրդոյ որոշմամբ հաղորդած է Ազգ. պատրիարքարանին, թէ երկամսեայ պայմանաժամի մը միջոցին, և այդ միջոցը 10 օրէն կը լրանայ, այդ ցանկերը պէտք է ներկայացուին, հակառակ պարագային, այն եկեղեցիները որոնք ֆէրման չունին և կամ ֆէրմանի կապուելու համար պահանջուած ցանկով չեն ներկայացուիր կառավարութեան, իրաւունք պիտի չունենան իրենց դպիրներուն զինուորութենէ զերծ կացուցուիլը պահանջել:

Հետևաբար, խնդրոյն ստիպողական հանգամանքը որոշ է, և Առաջնորդարանս կու գայ յայտարարել, թէ յապաղումներէ առաջ գալիք պատասխանատուութիւնը՝ պիտի վերաբերի ուզուած ցանկը ուշացնողներուն:

Մնամք Աղօթարար

---

[43] ՄՄ, Ադանայի Հայոց առաջնորդարանի արխիվ (անմշակ), Ադանայի Հայոց առաջնորդարանի նամակագրությունը, 10 հունվարի, 1915, թ. 215:

[44] Tahsisat (թրք.) - հատկացում դրամական:

[45] ՄՄ, Ադանայի Հայոց առաջնորդարանի նամակագրությունը, 10 հունվարի, 1915, թ. 215:

Առաջն. Ատանայի և վիճակաց.
Գ. [ծ.] վրդ. Արսլանեան»[46]:

Բացի այդ, Գևորգ ծ. վրդ. Արսլանյանի 1914 թ. դեկտեմբերի 30-ի հրամանով Ադանայի Հայոց առաջնորդարան են ներկայացվում չորս տարվա հաշվեցուցակներն ու նրանց հաշվեկշիռները, ինչպես նաև եկեղեցական և վարժարանական շարժուն գույքերի ու եկեղեցապատկան անշարժ կալվածքների ցուցակները[47]:

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի Ադանայի Հայոց առաջնորդարանի արխիվում, ի թիվս այլ վավերագրերի, պահվում են Զորք-Մարզպանի Վերի թաղի Թաղական խորհրդի՝ առաջնորդարան ուղարկված օրինակները. «Ս. Աստուածածին» եկեղեցական շարժուն առարկաներու ցուցակը (3 թերթ)», «Ս. Աստուածածին» եկեղեցապատկան անշարժ կալուածներու ցուցակը (1 թերթ)», «Կեդրոնական Վարժարանին շարժուն գոյքերը, Մանկապարտէզի շարժուն գոյքերը (1 թերթ)», «Աղջկանց Վարժարանի գոյքերը (1 թերթ)»: Յուցակներն Ադանայի Հայոց առաջնորդարանում մակագրվել են 1915 թ. հունվարի 20-ին, արձանագրվել՝ հունվարի 22-ին, արձանգրության թիվն է 883[48], ինչպես նաև Զորք Մարզպանի Վերի թաղի Թաղական խորհրդի հաշվեցուցակները. «Հաշուեցուցակ № [1.] 1910 Նոյեմբեր 1 էն 1912 Յունուար 1 (14 ամսուան) ելևմուտքին: Հաշուեցուցակ № 2. 1912 Յունուար 1 էն 1913 թ. Յունուար 1 (մէկ տարուան) ելևմուտքին: Հաշուեցուցակ № 3. 1913 Յունուար 1 էն 1914 Յունուար 1 ելևմուտքին: Հաշուեցուցակ № 4. 1914 Յունուար 1 էն 1914 Հոկտ. 15 (9½ ամսոյ) ելևմուտքին[49]»:

Հայերի նկատմամբ բռնությունը, հայկական կապիտալի կողոպուտն ու յուրացումը Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի բռնազավթումից ի վեր, Օսմանյան կայսրության պետական քաղաքականության հիմնական բաղադրիչներից էր: 1909 թ. Ադանայի հայերի ջարդը նպատակային և համակարգված հերթական հարվածն էր ոչ միայն մեծաթիվ զոհերի, այլև հայերի տնտեսական առաջընթացը հստակ կասեցնելու և նրանց ունեզրկելու տեսանկյունից: Հաշված օրերի ընթացքում Ադանայի հայ ձեռնարկատերերի մեծ մասը կայուն հարկատուի կարգավիճակից վերածվեց նպաստառուի, իսկ արտագնա աշխատանքի

---

46 Նույն տեղում, 10 դեկտեմբերի, 1914, թ. 161:
47 ՄՄ, Ադանայի Հայոց Առաջնորդարանի արխիվ, 30 դեկտեմբերի, 1914 թ., պաշտոնական ձևաթուղթ՝ «Թաղական Խորհուրդ Հայոց Վերի Թաղի Զորք-Մարզպանի», համար 615:
48 Նույն տեղում:
49 ՄՄ, Ադանայի Հայոց Առաջնորդարանի արխիվ:

կենտրոնատեղի հանդիսացող Ադանայի նահանգը գրեթե դարձավ գործազրկության կենտրոն: 1910-1914 թթ. ընթացքում բարեգործական տարբեր կառույցների օժանդակությամբ և տեղի ազգային իշխանությունների ու ձեռնարկատերերի ջանքերով, նահանգի հայության ընկերային-տնտեսական վիճակը մասամբ հնարավոր է դառնում վերականգնել: Հաղթահարելով մեծ դժվարություններ, մինչև Առաջին աշխարհամարտի սկսվելը, կիլիկիահայերն անգամ ունենում են տնտեսական լուրջ ձեռքբերումներ և հաջողություններ, որոնք էլ արդեն թուրքական իշխանությունների և մուսուլման բնակչության կողմից յուրացվում են Հայոց ցեղասպանության տարիներին:

ANI VOSKANYAN

THE ARMENIANS' ATTEMPTS TO REVIVE THE ECONOMY OF ADANA PROVINCE IN 1910–1914

Key Words: Cilicia, Adana Province, Ottoman Empire, Provincial Assembly of Adana, Political Assembly of Adana, Economical Council of Adana, massacre of 1909, national property, private and national property, destruction of economy.

The 1909 massacre of Adana came as another targeted and coordinated blow to the Armenians, not only resulting in a great number of victims among them but also thwarting their economic progress and depriving them of their property. Most of the Armenian entrepreneurs of Adana who had been taxpayers found themselves on relief just within several days. Between 1910 and 1914, thanks to the efforts of various charity organizations as well as the local national authorities and business owners, the economy partly revived in Adana. Overcoming great hardships, the Armenians of Cilicia even had some economic progress and achievements but they were deprived of everything during the Armenian Genocide.

АНИ ВОСКАНЯН

ПОПЫТКИ АРМЯН ВОССТАНОВИТЬ ЭКОНОМИКУ В ПРОВИНЦИИ АДАНА В 1910–1914 ГГ.

Ключевые слова: Киликия, провинция Адана, Османская империя, Уездное собрание Аданы, Политическое собрание Аданы, Экономический совет Аданы, резня 1909 г., национальная собственность, частное и национальное имущество, уничтожение экономики.

Резня в Адане в 1909 г. – очередной целенаправленный и скоординированный удар по армянам, который привел не только к многочисленным жертвам среди них, но и подорвал их экономический прогресс, лишил имущества. В течение нескольких дней большая часть армянских предпринимателей превратилась из налогоплательщиков в людей, получающих пособие. В 1910–1914 гг. при поддержке разных благотворительных организаций и усилиями местных национальных властей и предпринимателей экономика Аданы смогла частично восстановиться. Преодолев огромные трудности, армяне Киликии даже добились успехов в экономическом развитии, однако все было разграблено в годы Геноцида армян.